ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«23» հոկտեմբերի 2019 թվականի N: 261 ք.Գյումրի

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N:27-2/27-2/16255-2019 գրությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի 2019 թվականի հոկտեմբերի 9-ի զեկուցագիրը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Հարությունյանին 2019 թվականի հոկտեմբերի 28-ից 31-ը ներառյալ գործուղել քաղաք Երևան՝ «Մաստեր Սթայլ» ուսումնական կենտրոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ «Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստում» դասընթացներին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը չորս օր՝ 2019 թվականի հոկտեմբերի 28-ից 31-ը ներառյալ:
3. Սամվել Հարությունյանի՝ գործուղման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի պետ Մուշեղ Մուրադյանին:

4. Սամվել Հարությունյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է